

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԷՋ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԻՑ

Փիւնիկեան գաղութների հիման վրայ Ք. ծ. ա. Թ.-Ե. դարերում բարձրացած Կարթագենի հզոր ստրկատիրական պետութիւնը մրցակից էր Հռոմին: Հռովմայեցի նշանաւոր ճարտասան Կատոն Աւագը (Ք. ծ. ա. Գ. դարավերջ) սովորաբար ճառերն ասարտում էր իր երկրում տիրող կարծիքը կրկնելով՝ Կարթագենը «չարեաց պատճառ» է, «ուստի Կարթագենը պիտի կործանուի»: Եւ 149-146 թթ. պատերազմն ասարտուեց Հռոմի յաղթանակով, Կարթագենը իսկապէս կործանուեց: Այսօր անհամեմատ քիչ պահպանուած ինքնուրոյն գրաւոր յուշարձաններ են յայտնի Կարթագենից: Աւելի շուտ կարելի է ասել՝ գրական ինքնուրոյն յուշարձաններ չեն պահպանուել: Թերեւս պատճառն այն է, որ բնակչութիւնը ազգագրօրէն շատ բազմաբղետ էր (լիբիացիներ, փիւնիկեցիք, իբերներ, էլիմներ, սարդեր եւն): Ընդամենը յայտնի է, որ փիւնիկերէնի կարթագէնեան բարբառով ստեղծուել են պատմական յուշարձաններ՝ գրուած պղնձէ թերթերի վրայ: Կարթագենցի Մագոնի՝ երկրագործութեանը վերաբերող երկերից հատուածներ են պահպանուել Վերգիլիոսի «Երկրագործականք» աշխատութեան մէջ: Այնուամենայնիւ, մեզ հասած հատուկէնտ բնկորները համարժէք չեն երբեմնի աշխարհակալ պետութեան համբաւին: Մասնաւորապէս կարող էր Կարթագենին առնչութիւն ունենալ Պիրենէեան թերակղզու հարաւից գտնուած ճարմանդաւոր եւ դրուագազարդ գօտին՝ միջագետքեան բնորոշ տարագումով, ուր, ի միջի այլոց, պատկերուած է նաեւ առիծի դէմ մարտնչող մէկը¹: Եղած քչի հիմամբ եզրակացրել են, որ փիւնիկեան ծագման կարթագէնեան արուեստը զարգացել է Եգիպտոսի եւ Յունաստանի ազդեցութեամբ²:

¹ Տե՛ս **И. Шифман**, Возникновение Карфагенской державы, М.-Л., 1963, էջ 55:

² Տե՛ս **Н. Машкин**, Карфагенская держава до пунических войн, ВДИ, 1948, էջ 35-54. **Б. А. Тураев**, История древнего Востока, 2, М., 1935. **С. Picard**, *The life of Carhage*, London, 1968):

Զարմանալի է, որ հայ մատենագրության մեջ առանձնակի արձագանք չի գտել համաշխարհային պատմության այդ նշանաւոր երեւոյթը:

Այս տեսակէտից ուշագրաւ մի խրատական գրոյց է ինչ-որ կերպ պահպանուել. Կարթագէնին առնչուող մեզ ծանօթ միակ գեղարուեստական երկը, որ Մաշտոցեան մատենադարանի ձեռագրացուցակներում արձանագրուած է իբրեւ «Վէպը Կարթագինեայ»:

Ինչ է սա. կարթագէնեան գրական երկի մնացո՞ւկ, այդպիսի մի յուշարձանի արձագանք, վերջապէս, թարգմանութիւն, փոխադրութիւն, թէ՛ հեղինակային ինքնուրոյն ստեղծագործութիւն՝ բանահիստական հէնքի վրայ: Հարցեր, որ առկայ փաստերի յոյսի տակ պատասխան չունեն:

ա. Ձեռագրերը. «Վէպը» մեզ յայտնի է միայն երկու ընդօրինակութեամբ. Մաշտոցի անուան մատենադարանի թ. 8420 եւ 10589 ձեռագրերն են:

Առաջինը՝ 8420. ԺԸ. դար, Կոստանդնուպօլիս, գրիչ՝ Կարապետ Բերիացի: Ստացող՝ Կարապետ Բիզանդացի: Թերթ՝ 112: Թուղթ: Նոտրգիր: Յիշատակարան նախագաղափար՝ 74բ, ժամանակ՝ 1613 թ. (Իլով, գրիչ Նիկօլ Տօմաժէրսքի), գրչի՝ 76ա:

Ձեռագիրը ժողովածու է. «Բովանդ. Անդրէի Կապադովկացոյ Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու: Ներբողեանք (Մովս. Խորենացի, Աթ. Աղէքսանդրացի, Բարսեղ Կեսարացի): Յովհ. Բերիացոյ Վէպը Կարթագէնեայ: Տաղ գինոյ»³:

Ըստ «ԺԸ. դարի ձեռագրերի յիշատակարանների» (Ա. հտ., Երեւան, 1974, էջ 496, կազմողներ՝ Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան) առաջին յիշատակարանը «պէտք է լինի նախագաղափար, ինչպէս թարգմանչինը 74ա էջում, որից ընդօրինակել են այս ձեռագիրը ԺԸ. դարում»:

Ձեռագիրը խորագիր չունի, սկսում է «Նախերգանքով», յետոյ՝ ենթավերնագիր՝ «Վէպը», «Վերջաբանք», այնուհետեւ՝ «Համառօտութիւն բանիս ճոխութեան», «Ի նոյն կարգ բանք չափականք»:

Երկրորդը՝ թիւ 10589, Յօհաննէս Բերիացի, Վէպը Կարթագինեայ: Ժամանակ՝ 1817 (Կ. Պօլիս): Թերթ 14. թուղթ. 16,4x11,5: Միապիւն: Նոտրգիր: Տող՝ 21-22: Կազմ՝ ծաղկաթերթ. աստառ՝ սպիտակ թուղթ: Յշտկրն՝ 13 բ (1772, 1817 թթ.), հետագայի՝ 14 բ (1947 թ.)⁴:

³ «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի», հտ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաքեան, Երեւան, 1970, էջ 740:

⁴ «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի», հտ. Գ., կազմեց՝ Ա. Մալխասեան, Երեւան, 2007, էջ 128:

Ինչպէս տեսանք՝ մեզ հետաքրքրող բնագիրը, որ գրադնշում է /ա/ ձեռագրի թղ. 105ա-112ա, ցուցակի հեղինակները վերագրել են Յովհաննէս Բերիացուն, սակայն տուեալ գրչագիրն այդպիսի պնդում չի պարունակում: Այդ տեղեկութիւնը նրանք քաղել են /բ/ ձեռագրից, որ թղ. 13բ ունի համառօտ յիշատակագրութիւն. «1772. փետրուարի 9. շարադրեալ յԵրիթադրերս ի յՕհաննիսէ Բերիացոյ»: *Շարադրեալը* շեղել է ցուցակագրողներին, եւ գրիչը ճանաչուել է իբրեւ հեղինակ: Բայց արդէն գիտենք, որ բնագիրն ունի ակելի հին ընդօրինակութիւն, ուստի իրենից առնուազն դարուկէս առաջ գոյութիւն ունեցած բնագրի հեղինակ նա չէր կարող լինել: *Շարադրեալ* բառը տուեալ պարագային *ընդօրինակել*, *արտագրել* է նշանակում: Ուրեմն, Յովհաննէս Բերիացին «Վէպքի» հեղինակը չէ: Երկրորդաբար նկատենք՝ նրա (ընդօրինակութեան մէջ հանդիպող *ութին* վերջածանցի բարբառային կիրառութիւնը երջանկութեն, գյաղթութենա, սպառագիւնութեն) շեղում է գրաբարի նախանձախնդիր հեղինակի սկզբունքից, եւ բացառում է, որ Յովհաննէս Բերիացին լինի «աշխատասիրողը»:

Այս գրիչն ընդօրինակել է *Շարակնոց* ժողովածուներ: Նրա ապրած ժամանակը բաւականաչափ ստոյգ է՝ ԺԸ. դարի երկրորդ կէս (եթէ ընդունենք, որ այդ ժողովածուների գրիչ Յովհաննէս սարկաւազ Բերիացին նոյն մեզ հետաքրքրող Յովհաննէսն է):

1. Սա 1790 թ. արտագրել է «Շարական ՃԼԳ.», Վենետիկի ձեռ. թիւ 2813, էջ 1 գրելով՝ «Աշխատութեամբ ումեմն բանասիրի Յովհաննէս տրուպ եւ ապարդին սարկաւազի Բերիացոյ, ընդ հովանեաւ չքնաղակերտ գերահոջակ գերաշուք եկեղեցեացն Բերիոյ Սրբոյ Աստուածածնի եւ երկնահանգէտ Քառասնից Մանկանց»⁵:

2. Շարակնոց 1764 թ. գրիչ Յովհաննէս սարկաւազ Բերիացի. «աշխատասիրմամբ ուրումն Յովհաննէս տրուպ բանասիրի, յաննիիր դիտապետութեան հօր իմոյ Տեառն Գաբրիէլի արհոյն Բերիացոյ»⁶:

Ինչպէս տեսնում ենք, մեր ընդգծած *աշխատասիրմամբ* եւ *աշխատասիրութեամբ* բառերը գրիչն օգտագործում է *ընդօրինակութեան*, *արտագրելու* իմաստով: Յովհաննէս Բերիացին ինքն իրեն համարում է աշխատասիրող, որ նոր ժամանակներում ստեղծագործական իմաստ ունի, իսկ առհասարակ միջնադարեան գրիչներն իրենց անուանում են *գծող*, *գրող*, *նոյնիսկ՝ մրող*:

⁵ «Մայր ցուցակ Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Գ., կազմեց՝ Հ. Սահակ Ճեմնեմեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1993, էջ 553:

⁶ «Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց», հտ. Գ., կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1968, էջ 255:

Ժամանակը. Անհաւանական է, որ այս երկը ուշ միջնադարի գործ լինի, որովհետեւ մտածողութեամբ, մանաւանդ բառապաշարով «հնարոյր» է, շատ տարբեր միջնադարեան գեղարուեստական արձակի լեզուից, մասամբ հարազատ Ե.-Ժ. դարերի հեղինակների լեզուին՝ Ագաթանգեղոսից մինչեւ Գրիգոր Նարեկացի՝ ներառեալ նաեւ թարգմանական երկերը: Բնագիրը վերնագրուած չէ, բաժանուած է երեք մասի, սկսում է «Նախերգանքով», այնուհետեւ՝ «Վէպը», «Վերջաբանը», որը մի տեսակ առակի մեկնութիւնն է: Սրանց յաջորդում են ամփոփումը՝ «Համառօտութիւն բանիս ճոխութեան», ապա՝ «Ի Նոյն կարգ բանք չափականք»:

Ուրեմն, նիւթի վերնագիրը Ցուցակը կազմողներին է, գուցէ անկի ճիշտ կլինի ասել՝ խմբագրին:

Իր ինքնատիպ կառոցուածքով ու բառային ատաղձով վէպը եզակի է, հազուադէպ երևոյթ միջնադարեան հայ արձակի մէջ: «Նախերգանքը» եւ «Վերջաբանը» *նամակ* են՝ իբրեւ գրական հնարանք՝ թերեւս ուղղուած պատուիրատուին: «Համառօտութիւնը» նոյնպէս նամակ է յիշեցնում, նախորդ «նամակի» շարունակութիւնն է ըստ էութեան:

Երկի գրութեան ժամանակի մասին աղօտ, բայց թերեւս կողմնորոշիչ ակնարկ է «Վէպը»ի առաջին իսկ պարբերութիւնը. «Զրուցեն հին աւուրք մատենաք եւ հասու առնեն զմեզ երեկացն պատմութիւնք, թէ ընդ աւուրս ժամանակաց հոլովեալ ամաց քաղաքն Կարթագինէ, որ արդ եւ ոչ աներականաց հետք՝ հետագօտողաց երևին, յորժամ էր ի հաստադրական բարեկարգութեան...» (/ա/, թղ. 105ա): Աւելին՝ նոյն էջի մէկ ուրիշ ակնարկ եւս կայ, «նամակը» սկսում է հասցէատիրոջը՝ «քաջ գիտնականին» ուղղուած խոստովանութեամբ, թէ կամենում է մի գրոյց «կարգել», գետեղել, որ պատմելու է «ազգաց բանն կանխագիր»: Հրապարակուող բնագրի վերջին տողը թերեւս վկայում է, որ ամբողջը մէկ հեղինակի գործ է:

Իսկ եթէ ենթադրենք, որ հեղինակն իսկապէս ուշ միջնադարեան է (սահաւանական է), ապա պարտաւոր ենք արձանագրել, որ նա շատ ինքնատիպ եւ օժտուած, զուտ գրական յակումներ ունեցող մէկն է եղել՝ լաւածանօթ մատենագրութեանը, հետեւել է դասական մատենագրութեան ինչ-ինչ կանոնների, գրել է արհեստական գրաբարով:

Նիւթը. Հեղինակը կարելոր է համարում իր պատմելիքը՝ շեշտելով, թէ աչքը տեսնելով եւ ականջը լսելով չեն յագենում ազգերի հին պատմութիւններից: Կարթագէնեան պատմութիւնը դարերի հեռաւորութիւնից է գրաւել մատենագրին: Ուրեմն՝ Վէպը գրուած է նամակի ձեւով: Այն ըստ բովանդակութեան միաժամանակ գովք ու պարսաւ է գինուն, հանգամանք,

որ հազարամեակներով արտայայտություն է գտել ժողովրդական բանահիստության մեջ՝ իբրեւ կենսափորձի բնական արտայայտություն. գինու վնասը եւ օգուտը: *Խրատական սոյն գրոյցի կառոյցը կոտ է, դիպաշարը՝ նպատակաւազ, առանց անելորդութեան*: Ինչ-որ բանով, կարծես, դիպաշարը յիշեցնում է այսպէս կոչուած՝ «շրջանակեալ պատումները»: *Ինչպէս վայել է* միջնադարեան ուսուցողական-խրատական գրականութեանը, առակներին, մասնաւորաբար վէպըը պարզում է իր բարոյախօսականը («Վերջաբանը»): Հեղինակը գրական մարդ է, գրող՝ իսկական իմաստով, գիտէ ստեղծագործութեան կառոյցը կազմակերպել յստակօրէն, ամեն քայլն անում է՝ լիովին գիտակցելով արածը, ունի սեփական անհատական սկզբունքներ, ճաշակ:

Հին գրականութիւնը, բանահիստության նման, հարուստ է այսպիսի արծարծումներով, որ շեշտում են գինու հակասական յատկանիշները:

Ուշ միջնադարի տաղերգու Աստուածատուրը՝ «Տաղ եւ գովանք այգոյ, խաղողոյ եւ գինոյ» բանաստեղծութեան հեղինակը, ասես, ձգտում է համակողմանիօրէն «վերլուծել» խնդիրը՝ դիմելով անձնաւորուած գինուն.

Շատ խոովներ հաշտեցնես,
 Շատ սիրելիք կոռեցնես,
 Շատ անխելքներ ի խելք բերես
 Եւ շատ խելօք այլ խելցնես⁷:

Խօսում է Տէրտէր Գրիչ Երեւանցու (ԺԵ. դար) քերթուածը՝ գովք եւ պարսաւանք միանգամայն⁸: Գինին դիմառնաբար խոստովանում է.

Որ ազահ է ու արբեցող՝
 Ես հաւաստի եմ սպանող (76)...
 Որ խմէ գիւ գոհութեամբ՝
 Ես նմայ դեղ կենդանութեան,
 Բայց որ խմէ ազահութեամբ՝
 Ես նմայ դեղ յիմարութեան (78):

⁷ «Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (16-17-րդ դդ.)», հտ. Ա., աշխատ.՝ Յասմիկ Սահակեանի, Երևան, 1986, էջ 76:

⁸ Տե՛ս ԲԵՀ, 1989, թ. 1, էջ 73-79:

Այս «ղեղ յիմարութեանը» յաճախակի է հանդիպում տաղերգութեան մէջ՝ աղբիւր ունենալով Ս. Գիրքը (հմմտ. Սղմ. ԾԹ. 5 եւ այլն):

Տէրտէր Երեւանցու աւագ ժամանակակից Առաքել Սիւնեցի վարդապետը գիտէ, որ գինին այլազան բացասական յատկութիւններ ունի, ըստ այդմ տարբերում են՝ գինի յիմարութեան, մոռացութեան, թմրութեան, բարոյն ատելութեան եւ չարին հաւանութեան... Չար ուժերը Ադամին պատուիրանազանցութեան մղելու նպատակով պատրաստում են այդ գինիները՝ «խառնեալ թինօք մահաբերին»: Ադամին խաբում են օձն ու կինը՝ օգտագործելով տարատեսակ գինիներ⁹:

Մաշտոցեան մատենադարանի թ. 1768 (ԺԷ. դար, թղ. 174բ-176բ) եւ թ. 1769 (1664 թ., 214ա-215բ) ձեռագրերը ունեն միեւնոյն բնագիրը՝ «Զինչ է շահ գինոյն եւ կամ զինչ է վնաս նորա»: Կան նաեւ գինու «միակողմանի» գնահատականներ՝ գովք կամ պարսաւանք: ԺԳ. դարի ասորի մատենագիրը նշում է 6 կարգի մարդ, որոնք «չպէտք է խմեն գինի»։ 1. որ յիմարանում են խմելիս, 2. կոռուզանները, 3. նրանք, որ սոսկ բուսակեր են եւ շուտ են հարբում, 4. սովածները, 5. որ հարբում են առաջին բաժակից, 6. ովքեր յակում ունեն հագուստը կեղտոտելու¹⁰:

Պարսաւները գինուն երբեմն միացնում են եւ կնոջ վնասները: Մեծ լոռեցին Թմուկի իշխանի ուժն ու կարողութիւնները գովելուց յետոյ, երբ պատկերում է նրա պարտութիւնը՝ գրում է.

Այսպէս է ասել հնուց էդ մասին
Ֆարսի բիլբիլը՝ անմահ Ֆիրդուսին...
Թէկուզ եւ արար աշխարհի գայ վըրան՝
Կերթայ դէմ առ դէմ, տուր չի տալ իրան,
Ռոստոմ Զալն էլ չի յաղթի նըրան,
Թէ չինին
Կինն ու գինին¹¹:

⁹ Տե՛ս **Առաքել Սիւնեցի**, Ադամգիրք, աշխատ.՝ Ա. Մաղոյեանի, Երեւան, 1989, էջ 23-24:

¹⁰ Տե՛ս **Աբուլ Ֆարաբ**, Հետաքրքրաշարժ պատմութիւնների գիրք, ուսուերէնից թարգմ.՝ Հրանտ Աղասարեան, Երեւան, 1981, էջ 200:

¹¹ **Յովհաննէս Թումանեան**, Երկերի ժողովածու, հտ. Ա., Երեւան, 1969, էջ 189: Ի դէպ, յանգուցեալ արեւելագէտ Բ. Չուբասզեանը մի գրոյցի ժամանակ յայտնեց, որ յատկապէս ուշադիր վերընթերցել է «Շահնամէն»՝ գտնելու ակնարկուած միտքը, եւ պարզել է՝ պարսից մեծ բանաստեղծը այդպիսի տող չունի: Սա նշանակում է՝ Յովհ. Թումանեանը պարսիկ աշուղի ու շահի առկայութեամբ յարմար է դատել այդպիսի լուծումը՝ դրուագին համապատասխան երանգաւորում տալու նկատառումով: Մինչդեռ այդ ասութեան աղբիւրը Ս. Գիրքն է. տե՛ս, օրինակ, Սղմ. ԺԹ. 2, Սիրաք ԼԴ. 30-33, 41, ԺԹ. եւ այլն:

Միջնադարից մեզ յայտնի արձակ գործերի մեջ «Վէպը»-ին առաել հա-
րազատ է «Գինի» մանրավէպը, որ Մաշտոցեան մատենադարանի 4 ձե-
ռագրերի հիման վրայ հրապարակուել է «Էջեր հայ միջնադարեան արձա-
կից»¹² ժողովածուում: Բնագրին վերաբերող ծանոթագրութեան մէջ խօս-
ւում է նաեւ կարթագէնեան սոյն վէպի մասին, շեշտելով, թէ վերջինս ունի
«հետաքրքրական մանրամասներ, նկարագրութիւններ»¹³: Մինչ այդ «Գի-
նին» տպագրել են մի շարք պարբերականներ, ժողովածուներ, իսկ «Բագ-
մավէպը», ելնելով բովանդակութիւնից, վերնագրել է՝ «Զգինին հէնց խմե-
ցէք, որ գտնուի սպաննէք»¹⁴: Բայց «Վէպը» առանձնանում է. բարոյա-
խօսական-խրատական քարոզը «հիմնաւորում է» դիպաշարով: Յիշուած
բանաստեղծները պարզապէս արձանագրում են գինու յարուցած վնասնե-
րը: Այդպէս է նաեւ «Վէպը» եզրափակող «Ի նոյն կարգ չափականք» էջը:

Դիպաշարը. Կարթագէնի «փառունակ» իշխաններից մէկը, որ «զգօն
եւ յամենայնի խելամուտ» էր, հարբեցութեան գոհ է դառնում. արքան երկ-
րում արգելում է գինին՝ իբրեւ չարիքի պատճառ, նրա հրամանով կոտորում
են բոլոր կարասները... եւ որպէսզի քաղաքացիները գիշերով չայցելեն մի-
մեանց կամ պանդոկներ՝ «ոչ ի պէտս ինչ եւ ոչ յերթելեկս», սահմանում է
արդի ըմբռնումով «պարեկային ժամ», իսկ հսկողութիւնն իրականացնում
են համապատասխան պաշտօնեաները՝ «ձեռնաստուն» առիւծների օգնու-
թեամբ (հասկանալի է՝ հին աշխարհում բաւական ներդաշնակ էր մարդու
եւ բնութեան, մասնաւորաբար՝ մարդու եւ կենդանիների «համագործակ-
ցութիւնը»): Չնայած խստութիւններին՝ ի վերջոյ ի յայտ է գալիս նաեւ գինու
դրական յատկանիշը. պատումի գլխաւոր հերոսը յաղթական է դուրս գա-
լիս առիւծի հետ մենամարտելիս:

Առիւծին յաղթելու հանգամանքը հասարակ տեղի է՝ շումերական վե-
պից մինչեւ Սամսայ ծուր՝ ծանօթ գրեթէ բոլոր մշակոյթներին: Ինչ դեր ու-
նէր առիւծը Առաջաւոր Ասիայի ու Աֆրիկայի հնագոյն մշակոյթում, նոյնը
վագրին է վերագրում Հարաւարեւելեան Ասիայի (Հնդկաստան, Պակիս-
տան, Մալայեան կղզիներ, Հնդուչին եւն) երկրներում: Ասորեստանեան
թագաւորները, ինչպէս յայտնի է, սիրում էին իրենց պատկերել առիւծի դէմ
մարտնչելիս: Վանի թագաւորութեան արքաները, շումերները պատկերուել
են առիւծի, վագրի, ցուլի կամ առասպելական կենդանու վրայ կանգնած...

¹² Խմբագրութեամբ՝ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1957, էջ 60:

¹³ Անդ, էջ 247:

¹⁴ «Բագմավէպ», 1870, էջ 263. այստեղ Վէպի «արքունի փառունակ իշխաններից մէկի»
փոխարէն արքայի որդին է:

Բառապաշարը. Ասացինք՝ անհաւանական է տոյն երկի պատկանելութիւնը ուշ միջնադարին, մանաւանդ որ գրուած է գրաբարով (ոչ միջին հայերէն, ինչպէս ամբողջ միջնադարեան գեղարուեստական արձակն է):

Ընդհանուր առումով «Վէպի» բառապաշարը հարուստ, ուշագրաւ է. բնագրի հետաքրքրականութիւնը, թում է՝ անսպառելի է. 1. կան բառեր, որ չենք գտնի մեր կարեւորագոյն բառարաններում (ՆՀԲ, Մալխասեանց). ահաւասիկ դրանց մի մասը՝ *ամենաճեցուն, թիրախել, փարաքերնիք, չաքամեծ, մշտարտուր, օրաղէփ, հոգնագրոհ, յակոհճ, (յ)աղջել, արտանալ, արտելանալ, հակագինեալ, դոնեան, առիծապահ(ք), իրակեալ, հրաշաւէփ, պանծ, վարահանք(աց), շողպողեալ, ճառարական, կալուչ, կեղծաբան, զինուորմունք, սրակարկար, գաղպնել, կտուն(ա)լ, հրուար, ծայրագոր, կրկնանուագ, արձակաւարար, (գ)առնու, պարսահ եւ այլն*:

Ամանեալ՝ գոյական է եւ նշանակում է պարունակութիւն (ամանի): Որոշ բառեր եւս, որ կան բառարաններում, քիչ գործածական են մատենագրութեան մէջ. բառարանները միշտ չէ, որ բերում են համապատասխան օրինակներ (*հասարադրական, յամբարձաճիգ, մահամարոյց* եւն): Առկայ է սեպագրական շրջանի *աղիսամաղիս* բառը, որ այսօր քիչ փոփոխութեամբ կիրառում է ժողովրդախօսակցական լեզուի մէջ:

Արճանակ բառը չունի ՆՀԲ-ն, իսկ Ստ. Մալխասեանցն ունի՝ առանց օրինակի: Հր. Աճառեանը գրում է, թէ այն «նոր գրականին յատուկ բառ է», բայց ըստ Տէրվիշեանի՝ «թէլ միայն արդի լեզուն կը ճանաչէ գայն, սակայն բառին յօրինուածը կը վկայէ յայտնապէս թէ նոյն իսկ Ոսկեղէն դարու ժամանակներն ապահով գոյութիւն ունէր»¹⁵:

Բառի «հնագոյն» գործածութիւնը Տէրվիշեանին յայտնի է 1796-ից: «Տէրվիշեանը ուղիղ մեկնութիւնը տուաւ», - գրում է Հր. Աճառեանը (յղելով «Մապիս», 1882 եւ «Լեզու», 1887): Այսօր ունենք բառի գործածութիւն առնուագն ԺԷ. դարից:

Յիշեալ բառարանները չունեն *ժոխութիւն, գերփութիւն* (իբրեւ *գոյական*): ՆՀԲ-ն չունի *սպերջան*, Մալխասեանցը բացատրում է՝ առանց ջանքի կամ իզուր ջանացող, համապատասխան օրինակ չի բերում: Ըստ տոյն բնագրի՝ բառը նշանակում է աներջանիկ. «Տիրեալ երջանիկ այս քաղաքի՝ *սպերջան* ալստ շուայտութեան եւ արբեցութեան»:

Բաղաձայնոյթի, նմանահունչ բառերի կիրառութիւնը նոյնպէս բնորոշ է հեղինակին (բաղայս բարբառես, զինուորիլ զինու, զարս զօրութեան գելութիւնն գելխագործ, ժանտաժուտ ժոխութեան եղեն ժաման, հոլոնել հո-

¹⁵ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Ա., Երեւան, 1971, էջ 290:

լոնելոց հոլոնեալ, գտանեցեալ գինին գովելի գովելեացն գործակ գարշելի): Հեղինակը նաեւ յանգաւոր արձակի ակնյայտ յակում ունի. այդպիսի մի հատում, որի «չափը» պահպանում է, բերել ենք տողատաձ («Հօրիս վերայ ղ՛վ գօրացեալ»): Այդպէս, օրինակ, «...գիտէ ի բարեաց գրկել. ի գոյից երկելօք ի կորուստ գրկել. ի չարիս հերկել եւ զապատն բնակութեամբ ի բարեկարգութեանց կարգել»: Այս յատկանիշները անհաւանական են դարձնում երկի թարգմանում լինելու վարկածը (լաւագոյն պարագային թերեւս կարող է լինել ազատ փոխադրութիւն): Կարծես այսպիսի փաստերը յուշում են, որ գործ ունենք ո՛չ թարգմանութեան հետ: Այստեղ կան նաեւ բաներ, որ յիշեցնում են Գրիգոր Նարեկացուն (օր.՝ «Աւաղական ձայնարկութեամբ զանձինս տոյժ կոծեն»): Սա բանաձև է, թէ՛ ուղղակի փոխառութիւն բանաստեղծից: Յայտնի է, որ Յովհաննէս Դրասխանակերտցին, Արծրունեաց տան Թովմա պատմիչը եւս ոճապէս որոշ չափով յիշեցնում են Նարեկացուն: Սոյն բնագրի հեղինակը կամ խմբագիրը Վասպուրական տարածաշրջանից է: Այս ենթադրութեան միակ տեսանկյնի օրինակը թերեւս *հանութ (խանութ)* բառն է:

«Վէպքը» թաքցրած ունի բառական շատ գաղտնիքներ, որոնց մի մասին ըստ հնարաւորութեան անդրադարձանք: Յուսանք, որ աշխարհափիւռ հայկական ձեռագրերից մէկնումէկը ի յայտ կգայ եւ կօգնի գտնելու դրանց պատասխանները: Կպարզուի, թերեւս, երկի գրութեան աւելի ստոյգ ժամանակը, պատասխան կգտնեն բնագրի յարուցած բարդութիւնները եւն: Առայժմ բաւարարուենք ձեռքի տակ եղած սուղ տուեալներով:

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ
ՍԻՐԱՆՈՅՇ ՄԱԴՈՅԵԱՆ

ՎԷՊՔ ԿԱՐԹԱԳԻՆԵԱՅ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Քիտեմ, սիրելի է քեզ, քաջդ գիտնական, կանգնումն կարգացեալ, հազներգութեանցն հանդէս. վասն որոյ եւ զրոյցս ինչ կարգեալ¹ զկնի կարեւոր համարիմ. քեզ եւ որոց ընդ քեզ են² առնել վերծանելեացն զբօսանս: Քանզի ո՛չ ակն ի տեսանել, եւ ոչ ունկն ի լսել՝ ունիլ զյագուրդ՝ ազգեաց բանն կանխագիր: Եւ թէպէտ անոճ և տգեղ տեսակս ունիլ տեսանիցին բանիցս յերկրք, բայց առ այն ի գութ գորովոյ զիջանիլ ժտեմ, յիշեալ թէ՛ այն ինչ յատուկ է դեռավարժից՝ բազմասխալն լինիլ:

Ուրեմն կարեկցաբար եւ ողջամիտ սիրով ընկալ զայս՝ իբր զբռնալիր ափալիցն եւ եթ ջուր նուիրեալ սիրտն այն արքայի:

ՎԷՊՔ

Ղրուցեն հին աւուրք մատեանք. եւ հասու առնեն զմեզ երեկայցն³ Կպատմութիւնք, թէ ընդ աւուրս ժամանակաց հոլովեալ ամաց քաղաքն Կարթագինէ⁴, որ արդ եւ ոչ աւերակաց⁵ հետք՝ հետազօտողաց⁶ երեւին, յորժամ էր ի մեծագոր տէրութեան, յամբարձաձիգ⁷ իշխանութեան, յառոյգ⁸ ճոխութեան եւ ի հաստադրական բարեկարգութեան: Տիրեալ երջանիկ այս քաղաքի՝ ապերջան ախտ շուռայտութեան եւ արբեցութեան. յաւաքաց հառեալ եւ յանաւագս պսակեալ վատթար իմն վթարմամբ զնոսա վրիպեաց, եւ գլխովին զքաղաքն յայն ախտ վարակեալ՝ յոգի դատեաց զարս զօրութեան զեղխութիւնն⁹ զեղծագործ:

¹ ք. կարգել:

² ա. չիք են:

³ ք. երեկայցն:

⁴ ա. Կարթագինէ:

⁵ ք. աւերակացն:

⁶ ք. հետազօտողացն:

⁷ ք. հանքարձաձիգ:

⁸ ք. յառոյգ:

⁹ ա. զեղխութիւնն:

Եւ այս այնքան ամենաճեցուն առաւելութեամբ գերապատկեալ որպէս զի ի բանականութեանն սահմանէ ամենեցուն եղծանիլ զեղծանիլ եւ տարօրինակ տարազու տարագրիլ ի զգաստութեանն զգօնութենէ. Համբուրեալք զպայման պարսաւոյ անպարկեշտ¹⁰ պարու պաճարեղինաց: Քանզի անդ էր տեսանել զթագաւորին պատիւ, զիրաւունս ո՛չ սիրեալ. զնախարարս յիշխանութենէ հոգս ո՛չ հոլովեալ, զվերակացուս ի յապահովութիւն քաղաքին՝ ո՛չ յածեալ եւ զիրաւարարս ի դատ ընտրութեան ի դատողականն աթոռ ոչ հանդիսեցեալ:

Եւ առ ի հաւաստել հասարակաց¹¹ առածին՝ թէ ձուկն ի գլխոյն սկսանի նեխիլ. զնոյն վիշտ վտանգի կարէ գին կրից եւ երաստ ամբոխին յանձին ունէր ըստանձեալ: Զիրեարն ո՛չ զիւրեանցարհեստից¹² զհետ լինէին¹³ կրթեալ. կանանին ոչ զտնարարութեան կնի հետամուտ եղեալ: Մանկունք ո՛չ ի հրահանգ անտիական խակութեան առ մանկածուս առաքեալ, որպէս եւ ոչ իսկ սոցա երբէք ընդ փորձ ազատական արհեստի¹⁴ մխեալ: Եւ այսպէս տարաբերնիք¹⁵ արուեստականաց առ արկանեալ, կրպակք հանթից փակեալ, սենեակք վաճառաց աղխեալ, առ եւ գինք անհետացեալ, եւ տարազք աղխամաղխից չարամեծ գերծեալ¹⁶: Յորոց շահուցն յուսոյ յուսակորոյս¹⁷ եւ տեարցն լեալ լքան, լուծան, ընդարմացան ժողովն համայն՝ զվերջինն արբեալք զթշուառութեան¹⁸ մահամատոյցն զբաժակ: Քանզի այս ախտ որոց տիրանէ՝ գիտէ ի բարեաց զրկել. ի գոյից երկելօք¹⁹ ի կորուստ գրկել. ի չարիս հերկել եւ զապատն²⁰ բնակութեամբ անապատ ի բարեկարգութեանց կարգել:

Զսոյն ախտացեալ ի խոտան²¹ ախտէ յաղթեցեալս այս քաղաք. լինէին իրաւունքն մերժեալ, ծէսքն ջրեալ, բարեկարգութիւնքն խահրեալ. եւ հարակրութիւնք յամենուստեքէ²² պատեալ պաշարեալ, մինչեւ համակ թագաւորութեանն զվեր ի զվայր²³ գրեթէ կրել զկործանումն: Քանզի անշուշտ

¹⁰ ք. անպարկեշտք:

¹¹ ա. հարկաց:

¹² ք. գիրեանց գարիեստից:

¹³ ք. լինէին:

¹⁴ ք. արիեստից:

¹⁵ ք. տարաբերիք:

¹⁶ ք. գեղծեալ:

¹⁷ ա. յուշակորոյս:

¹⁸ ք. գթշուառութեան:

¹⁹ ք. մերկել փխ երկելօք:

²⁰ ա. զապատն:

²¹ ք. խոսան:

²² ք. յամենուստեքէ կուսէ:

²³ ք. զվեր և վայր:

բարձեալ բերէին յանձինս զտիպ պատկերի հեղեղահեղձն արանց. եւ վա-
յելէին զվա՛յն յԱմովսաճնէն²⁴ կարդացեալ, որոց ընդ առաւօտս յարուցեալ
զարբելեաց լինէին²⁵ զհետ ի նմին երեկոյացեալքս²⁶. Դա եւ դոքա գինեկեղք
մոլեալ մոլորեալ զանառակ արբեցութենէ²⁷ զկնի. եւ առ մի մի վայր խրախ-
ճանս յօրինեալ՝ գինեբրուս հարեալ²⁸. ցանկ զանձինս ի շուայտութեան
տիղմ թաթաւեալ ո՛չ դադարէին, որով համբուրէին զվիճակ արժանաւոր
արդարեւ տարակուսանաց եւ մշտարտօսը կականման. Քանզի յայն սահ-
ման դառնադառն վտանգի եւ ժանտաժուտ ժողխութեան եղեն ժաման. մինչ
զի թէ դէպ լինիցէր մօտալուտ թշնամեաց յառնել ի վերայ. կամ հինից²⁹ հրա-
հոսակաց գերբութեամբ³⁰ յերկիր նոցա յարձակիլ. վաղու եւս հեշտին իմն եւ
համարձակ ձերբաձիգ յինքեանս գրաւեալ գերկիր նոցա եւ զաթոռ անճեռ
եւ անյիշատակ զկեանս նոցա ջնջեալ բառնային ի կենդանեացս երկրէ:

Եւ այսպէս գերեաց գինին, յիմարեցոյց զեղխութիւնն, թմբերեցոյց արբե-
ցութիւնն մեղկացուցիչ, եւ ի դրունս կորըստեան³¹ պատատեցոյց գինեսի-
րութիւնն զգաստակորոյս եւ հանճարազրաւ:

Դէպ լինէր յաւուրսն յայնոսիկ զոմն յարքունի փառունակ իշխանաց
կարծեալ զգօն եւ յամենայնի խելամուտ. յուրեք առաքեալ³² մեծասար հան-
դերձանօք պիտեւան գործոյ վասն. Եւ յուղղորդութեամբ³³ անդորր եւ ապա-
հով պատահեալ վայրի՝ էջս առ նոյն հրամայէ առնել. յորում հետ մեծահաց
զճաշն կազմելոյ՝ յումպ արբելեաց գերախանն լուծանեն՝ ըստ բուսոյ բարուց
բնութեան նոցին, մինչև յուշակորոյս եւ զգայազիրկ պարտիլ եւ պարպա-
տիլ³⁴ նոցա ի բազում գինեբրութենէ անտի, եւ դիտապաստ յերկիր ճապաղ
սփռեալ³⁵ նիրհել զքուն թանճրութեան³⁶ մեռելոյ զօրէն:

Յայն պահ պատահեալ անգեղ օգաթուիչ սլացմամբ, եւ համարելով զնո-
սա անկեալս ի³⁷ պատերազմի՝ ճախր առեալ, ուղղակի խոնարհեալ յարձակի

²⁴ Հմմտ. Ես. Ե. 11, 22:

²⁵ ա. լինին:

²⁶ ք. երեկոյացեալք:

²⁷ ք. արբեցութեան:

²⁸ ք. հաւտեալ:

²⁹ ա. հիմից:

³⁰ ա. գերփութեամբ:

³¹ ք. կորստեան:

³² ք. առաքել:

³³ ք. յուղղորդութեան:

³⁴ ք. պարտիլ պարպատիլ և պարտասիլ:

³⁵ ք. ըսփռեալ:

³⁶ ք. թանճրութեան:

³⁷ ք. չիք ի:

ի վերայ եւ զերկուս սալարին զակունս յակնակապճէ անտի բրեալ բոլորեալ յուտեստ իւր յարդարէր, եւ անդէն³⁸ խոյացեալ, ուստի էջն՝ դարձ առնէր. ի հանդէս հատուցման արդարեւ արդար հանդիպեալ, զի զաչացուն յոգի անարժան դատեաց տեսակն³⁹ գոլ ի մարմնի⁴⁰. Այլ չուառ չուականին յանակնունելի վտանգէս⁴¹ ոչ ինչ զգացեալ, օգուտ ժամուց զկնի ի գինւոյ թմրութենէ լրջացեալ՝ աւաղականն⁴² ձայնարկութեամբ զանձինն տոյժ կոծէր, եւ վայրս վհատականս ժառանգեալ տարաբաղդութեան⁴³ կարգացեալ: Ուստի չոգաւն ի նոյն դարձ առնէր՝ անգործ թողեալ զկարեւորն գործ:

Իբրեւ յայն ողորմագին սահման թշուառութեան ետես թագաւորն՝ զիջեալ զիւրն մտերիմ, եւ զթագաւորութեանն⁴⁴ խոհերիմ միանգամայն եւ յարքայանիստ քաղաքն չարաշուք տգեղ անկարգութիւնն⁴⁵ անդր հայեցեալ, յայն որ ի վերջինն էր վարեալ վարանումն, ուշ ի կուրծս անկեալ յանդաճումն վարեալ, յարտասուս հարեալ, ի սիրտ եւ յոգի կարէվէր⁴⁶ խոցեալ՝ ելս խորհէր իրացն գործել: Եւ առ վշտին վարանեալ ժամ դնէր, կէտ սահմանէր, պահ պայմանէր ի⁴⁷ խմբիլ ազատեւրամն երաստից ի կոչ արքունի, այն ինչ անճաշակ լեալք զայն օր յարբելեաց համոյ:

Նոքա այն ինչ ըստ տէրունի հրամանին ի ժամակալ յօրադէտ պայմանն փութային⁴⁸, անդէն բանիլ սկսաւ արքայն. եւ զծածուկս խորհրդապետացն⁴⁹ հոլոնելոց հոլանել:

«Արժան է մեզ, ասէ, - ո՛վ արքայութեանս կարեաց խոհեմ խորհրդածութիւն զխորհուրդ ի մէջ առնուլ, որով մարթասցուք զդաւաբեր զանհնարին վտանգ աղետիս յանձնէ ի բաց պարուրել, եւ ի թիւր թեւակոխութենէ զմեզ ուղղել: Զի թագաւորութեանս այս մեր վեր. արժանաւոր խորհրդովք. ներհուն վիրասպիցդ վաղվաղ մինչ չեւ է զանձամբ կռուեալ. եթէ ո՛չ բուժիցի՝ զայրանայ, փաղաղէ եւ զթագաւորութեանս մարմին համաճարակ ախտալից ի կորուստ գրաւէ: Յոր պահ վիրաց խարանք անգործ պատահեսցին՝ եւ սպեղանեաց դիրք ի չպէտս վատնեսցին: Հապա մինչ ժամ կայ՝ ձեռս ի գործ

³⁸ ք. անդէն:

³⁹ ք. տեսական:

⁴⁰ ք. մարմին:

⁴¹ ք. վտանգէն:

⁴² ք. աւաղական:

⁴³ ք. տարաբաղդութեան:

⁴⁴ ք. զթագաւորութեան:

⁴⁵ ք. անկարգութիւն:

⁴⁶ ք. կարնէր:

⁴⁷ ք. չիք ի:

⁴⁸ ք. փութացան:

⁴⁹ ք. խորհրդոցն խորհրդապետացն:

արկցուք, եւ յանձանց շինութեան անձանձիր ճեպով ճեպեսցուք: Մի՛ եւ մի՛ առօրեայ հեշտութեան եւ ախորժակի մերոյ փոքու վասն, ծաղածանակ ի ժառանգաց⁵⁰ յաւանից կեանս լիցուք, եւ զյոգնագրոհ խուժանին⁵¹ զօգուտ ի վերջ նահանջեսցուք, որով ոչ ինչ շահեցան որք⁵² այնպէս գնացին»:

Իբրեւ զայս օրինակ զբանսն⁵³ մերկանայր թագաւորն, ապա⁵⁴ ունկընդ-րացն բոյլք եւ յակճիւռս կացելոցն կաճառք խելամուտ խօսիւքն ամոքեալք, իբրեւ ընդ մի բարբառ աղաղակել սկսան. «Կեցցէ արքայ, - ասեն, - սրտի մտօք հաճ եւ հաւան եմք հոյակապ հրամանիդ. թէ եւ ընդ դէմ դիւրութեան մերոյ ոգորիցի, միայն⁵⁵ թէ մարթիցէ զմեզ յայս մօտակալուտ մահահրաւէր կործանմանէ ի կեանս կանգնել»։ Ապա⁵⁶ ի հասարակաց⁵⁷ հաւանութենէն⁵⁸ դատեալ ընտրեցաւ, զի ի բազ արկցի պարուրեալ հրամանաւ ումպն⁵⁹ գին-ւոյ՝ յամենայն տէրութեան⁶⁰ Կարթագենեայ ի կորուստ մատնելով միանգա-մայն զայնու ժամանակաւ գտանեցեալ գինին գովելի գովելեացն գործակ գարշելի։ Վասն որոյ արքունի մեծագոր սաստիւքն հրամանահան եղեւ թա-գաւորն ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրում զի ի հպել այսմիկ հրամա-նիս ի մեծի եւ ի փոքու խելիս՝ ի կորուստ դատեսցեն զգինի⁶¹ գտանեցեալ առ մի մի վայր⁶²:

Եւ յետ պայմանեալ աւուրն լրման՝ առ որում եւ գտանիցի նոյն նիւթ ընդ զընդալոյ⁶³ ի կորնչելին ինչքն յարքայութեանս⁶⁴ եւ ինքն ի ծովու ալիս։

Եւ այս բազ արգելանաց այնքան ոխորտ եւ հատու, մինչ զի եթէ եւ թա-գազարմի կամ արքայորդւոյ⁶⁵ իսկ անցանել⁶⁶ իցէր ընդ այս հրաման. նոյն բաժին չարաչար կտտանաց հանդերձեալ պահիւր որ ինչ յէտին ստանկին⁶⁷:

⁵⁰ ք. չիք ժառանգաց:

⁵¹ ք. խուժանի:

⁵² ա. արք:

⁵³ ք. գրանս:

⁵⁴ ք. ապա ն:

⁵⁵ ք. չիք թէն ընդ դէմ... ոգորիցի միայն:

⁵⁶ ք. ապա ն:

⁵⁷ ք. հասարակացն:

⁵⁸ ք. հաւանութեան:

⁵⁹ ք. յումպն:

⁶⁰ ք. տէրութեանն:

⁶¹ ք. զգինիս:

⁶² ք. այլ:

⁶³ ք. զընդալոյն:

⁶⁴ ք. յարքունիս:

⁶⁵ ա. թագազարմի կամ արքայ:

⁶⁶ ք. անցանել զանցանել:

⁶⁷ ք. հետին ըստանկին:

Զայս օրինակ եւ քարոզն ի հրապարակս քաղաքին Կարթագինեայ կարդայր, եւ զօրեղ զօրականք պատկառատեսակ պալատին յայս հատու հրաման է⁶⁸ իբրեւ զնետս մխեալ⁶⁹ կաղնույ կայծակամբք՝ յեղակարծ յիւրաքանչիւր տունս յարձակեալ⁷⁰, զամանսն բեկեալ⁷¹, զամանեալսն⁷² հեղուին։ Յորմէ շիկորակ ջուրցն⁷³ հեղեղք երեւին⁷⁴ տիրել, եւ կոտորոցն բեկորիւք մարթ երեւելակաւ⁷⁵ կառուցանել։

Դէպ լինէր կնոջ միոյ այրույ, ունողի զմանուկ մի երկեմեան, ծմակացեալ ծերութեանն լուսածագ՝ ունեւ⁷⁶ զերկու կարասս գինւոյ, յորոց մինն անխայեալ իջուցանէ զայն ի ստորին նկուղ գետնափորի անդ, եւ ընդ երկրաւ գետեղեալ՝ հետախաղաղ զշաւիղն ծածկէր, յապայն ժամանակի առ սակաւ ի սնունդ զարգացման մանկանն տղայի։

Իբրեւ եկին մտին ի տուն անդր դահիճք⁷⁷ հրամանակատարք՝ տեսեալ զմի կարասն՝ հարեալ բեկին, իսկ զմիւսմէն տգիտացեալք արձակեցան ի բաց։

Եւ այսպէս յամենուրեք նովին հանգամանօք կատարել զհրամանն ահեղ իմն բանի ի սակաւ աւուրս զբանն բոլորեցին, եւ զգործն ի գլուխ անվեհեր մատուցին։

Եւ առ ի հաստարմատ հիմնել զայս պարոյր հրամանք. առ երեկոյ իբրեւ արեւ⁷⁸ ի մուտս մօտէր⁷⁹ զերկուս ահեղ առիւծունս ի գոռագղէ անտի ի քաղաքին փողոցս արձակէին։ Յորոց երկիւղէ չէր մարթ ումէք⁸⁰ գիշերոյն ընդ դուռն տան իւրոյ ելանել. ոչ⁸¹ ի պէտս ինչ եւ ոչ յերթեւեկս բարեկամութեան, որով կասեցան օրէնք խրախճանաց եւ լքան կազմութիւնք մեծահաց կոչմանց, զի բարձեալ պատճառին՝ բարձաւ եւ պատճառելին։

Եւ այսպէս խոհեմ խորհրդով. եւ գեղեցիկ մոլութեամբ յերկրէ անտի ախտըն գինեճանութեան կարճ նովին ջնջեալ՝ հիմնեցաւ հաստատեցաւ

⁶⁸ ա. հրամանն է։

⁶⁹ բ. մխեալն։

⁷⁰ բ. յարձակեալք։

⁷¹ բ. բեկեալք։

⁷² բ. զամանեալն։

⁷³ բ. ջուրց։

⁷⁴ բ. երևէին։

⁷⁵ բ. երևէր ակառ։

⁷⁶ բ. ունիլ։

⁷⁷ բ. դահիճն։

⁷⁸ ա. չիք արև։

⁷⁹ բ. մօտ էր։

⁸⁰ ա. ումէք։

⁸¹ բ. որ։

ընդ նորա զգաստութեանն զգօնութիւն, եւ որք անտի յառաջ գային⁸² բարեբաստ⁸³ բեղմնաւորութիւնք արգասալիւր հտուն զպտուղս իւրեանց:

Յայնմհետէ սկիզբն կալաւ արքայութիւնն կորովանալ, իշխանութիւնն ճոխանալ եւ ձգիլ՝ ուր չէր կարգացեալ՝ անուն կարթագինեայց⁸⁴. վաճառք՝ առատանալ, արուեստ՝ բազմանալ, առաքինութիւնն՝ յօրանալ. եւ անձնիւր այլ ի գործս ձեռաց իւրոց ուրախանալ:

Իսկ կնոջն այրւոյ⁸⁵ զարգացուցեալ զմանուկն՝ միշտ մատուցակէր նմա ի գինւոյ անտի, մինչեւ ողջունել նմա ի պատանեկութեան տիս:

Յաւուր միտամ անագանեալ եւ ի գործոյ ապաժամ եկեալ. մինչ մօտ էին զառիւծունսն⁸⁶ արձակել, ոչ ժամանէ բերել յաղբերէ անտի ջուրս, վասն որոյ զծարաւն⁸⁷ ջրոյ⁸⁸ զիջուցանել կամեցեալ տակառաւ⁸⁹ գինւոյն⁹⁰ գովելոյ⁹¹ մատուցանէ նմա մայրն յըմպել: Իսկ զկնի ժամուց ինչ՝ իբր հասարակ⁹² գիշերաւ արծարծեալ ի նմա տապ տոչորման ծարաւոյ, եւ ոչ բաւացեալ⁹³ յաղթել⁹⁴ զջրոյն պապակ եւ զգովացմանն փափաք, զմահ յաչսն թիրախէ. եւ քաջասրտեալ գօտեպնդեալ՝ բառնայ զսափորն պղնձի ի յուս, եւ զդուռն բացեալ զտան՝ յաղբիւրն դիմէ: Եւ իբրեւ լցեալ զայն՝ դառնայր անդրէն վատ իմն պատահ բաղդի լինէր. նմա դիպան. գիշերապահ առիւծուն ունել զճանապարհին անցս, որ եւ ահեղ կոչմամբ, ահարկու գոչմամբ եւ սասանական մոնչմամբ⁹⁵ դէմ ընդ դէմ եկեալ եւ յարձակեալ ի վերայ՝ կամէր կենդանւոյն⁹⁶ կլանել զնա: Իսկ համպակին տեսեալ զաղետ⁹⁷ վտանգի՝ կանխեալ օրհասի մահուն եկեալ հասեալ, եւ անդրէն⁹⁸ մօտ կամ լուտ զտիւրեքն պատեալ, ի բաց զերկիւղ սնոտի եղեալ, արտանայր⁹⁹՝ արտեղա-

⁸² ք. յառաջագային:

⁸³ ա. բարեբաստ:

⁸⁴ ա. կարթագինեայց:

⁸⁵ ք. այրոյ:

⁸⁶ ք. գառիւծունս:

⁸⁷ ք. զծարաւ:

⁸⁸ ք. ջրոյն:

⁸⁹ ք. տակառի:

⁹⁰ ք. գինւոյ:

⁹¹ ք. գովանոյ:

⁹² ք. զհասարակ:

⁹³ ա. բացեալ:

⁹⁴ ա. յաղջել:

⁹⁵ ա. մանչմամբ:

⁹⁶ ք. կենդանւոյն:

⁹⁷ ք. գաղէտ:

⁹⁸ ք. անդէն:

⁹⁹ ք. որտանայր:

նայր: Քանզի եւ չէր ոք զօրավիզն՝ առ որ կարդայր օգնել, կամ ի թիկունս հասանել: Վասն որոյ առ հարկի ձեռն ի գործ առնէր ինքնին, մղէր առաքինանալ ի հանդէս մարտակցութեան ընդ ամեհի այն առիւծուն հակազինեալ:

Անդ էր տեսանել զայլ իմն հանդէս դռնեան մանուէ ածն է¹⁰⁰, որ խրոխտ զօրութեամբ յերկուս զկերչէն¹⁰¹ ցելոյր ժանիս. նա եւ փոքր առ սա զնորուն իմանամբ հանդէս:

Արդ յետ օգուտ գօտեմարտութեան յետուստ կուսէ առիւծուն անցեալ, եւ զերկուց ոտիցն կալեալ՝ յերկուս զանհեթէթն զայն մարմին բաժանէր, եւ զնորինն¹⁰² գէշ ի փողոցի անդ ճապաղ սփռեալ՝ ինքն անցեալ գնայր ի տուն¹⁰³:

Իբրեւ այգն զցայգն մերկանայր, այն ինչ ծայրակարմիր¹⁰⁴ արեգակն ընդ երկիր ծաւալեալ կամէր, եկեալ առիւծապահէն¹⁰⁵ ի պահ ունել զառիւծունսն¹⁰⁶, տեսին՝ զի մինն չէր ի միջի, եւ այսր անդր ընթացեալք անկեալ ականեցին ի մի հրապարակացն զշաւիղն մեռելոտի, ուստի զարհուրեալ եւ ընդ գործն սքանչանի ահիւ պակուցեալ. նոյնհետայն ազդ առնեն քաջի արանցն զայսպիսի հաս¹⁰⁷ իրակեալ վրտանգս որ ընդ լսելն¹⁰⁸ տագնապոյ տարակուսանաց զնովաւ շաղապատեալ¹⁰⁹. եւ ի կարծիս կասկածանաց ընդ աւագանւոյն թաւալել¹¹⁰. հասանէ¹¹¹ նոցա հետ ընդ հետ հասանել յայն վայր, ի զննին տեսեան հրաշագան տեսարանին, ուր զահի զերկիւղի հարեալ, եւ յերկար ժամս ապուշ կրթեցեալ, բանս ի բերան առեալ հիացականս ասել սկսան:

Հգօրիս վերայ ո՛վ զօրացեա՛լ,
Եւ զանպարտելիս ո՞յր ձեռք են պարտեալ,
Ջահեղ թագաւորս ո՛վ ստրուկ կարգեալ,
Եւ զանարգ վախճան առ սովաւ ածեալ,

¹⁰⁰ ք. ամսի:

¹⁰¹ ք. զկերչին:

¹⁰² ք. գնորուն:

¹⁰³ ա. չիք ի տուն:

¹⁰⁴ ա. չիք Իբրեւ...ծայրակարմիր:

¹⁰⁵ ա. գառիւծապահին:

¹⁰⁶ ք. գառիւծունս:

¹⁰⁷ ք. զայսպիսահաս:

¹⁰⁸ ա. լսելն տալ:

¹⁰⁹ ա. շաղապատել:

¹¹⁰ ք. թաւալեալ:

¹¹¹ ք. հասանէ խմբովին:

Որ զայս հրաշալէտ յաղթութիւն ուղղեալ՝
Դիւցազգի զնա ի գէպ է կարգալ:

Ապա ճշդիւ խնդրել սկսան. «Ո՞վ, - ասեն, - բանեղէն առիւծ՝ անբան առիւծուս իցէ պատահեալ. եկեսցէ կացցէ ի մէջ, զի զնա մեծաշուք, մեծապարգեւ պսակեսցուք. պանծ զմեզ վարկուցեալ զառ ի նմանէ յաղթութիւնն ուղղեալ»:

Յայս ձայնէ վստահանաց խրախուսեալ հուժկու պատանիս այն ան-
նման քաջի արանցն¹¹² փոխարինին լինէր յանդիման:

«Յիս, - ասէ, - տէր եպարքոս, այս վնաս, յայս նիշ գիշերի ծառայդ ծարաւեալ եւ առ ի չգոյէ ջրոյ ի տան՝ յաղբիւրն չոգայ, յոր պահ պատահ պատուհասի լինէր ինձ ժաման. հեռգայօղ¹¹³ առիւծուց միոյն ունել զանձս ճանապարհի իմոյ:

Իբրեւ ստուգեցի զլինիլ¹¹⁴, կուր կորստական կոկորդից նորին. մենա-
մարտեալ հատուցի զհատուցումն նորա նմին, եւ ես շողշոպեալ¹¹⁵ ի նորուն
ժանեաց՝ ողջունեցի զողջութիւն¹¹⁶:

Իբրեւ այս բար զբանսն պատշաճէր՝ ակնապուշ ակնակառոյց որք
այն¹¹⁷ հանդիսի էին, աչք ի նա հայէին, եւ տեսեալ զանտիականն զխակու-
թիւն զնկնահասակ դրակին¹¹⁸ զգծծութիւն՝ ընչացս բանալ սկսան՝ անա-
ռատ թուեալ նոցա եւ ճառատական՝ ճառքն ճառեցեալ¹¹⁹: Վասն որոյ եւ¹²⁰
զասացելոյն¹²¹ զփորձ առնուլ կամեցեալ բանս հեպարքոս¹²² մատուցանէ ի
մէջ:

«...Եթէ չէ քո, - ասէ¹²³, - երբեք ընդ խաբս եկեալ եւ կամ զսուտս սի-
րեալ¹²⁴ այժմ իսկ յանդիման ցուցանի: Է՛ս աստ գիշատելոյ առիւծուդ յարա-
կից զուգորդ՝ ի մէջ բերցի. եթէ վիճակես զնա միւսոյն վիճակեալ բաղդի՝

¹¹² Բ. արանց:

¹¹³ Բ. հեռիպոյղ:

¹¹⁴ Բ. զլինիլս:

¹¹⁵ Բ. շողշոպեալ:

¹¹⁶ Բ. ողջութիւն:

¹¹⁷ Ա. ձայն փխ այն:

¹¹⁸ Բ. դարակին:

¹¹⁹ Բ. ճառեցեալք:

¹²⁰ Բ. չիք և:

¹²¹ Բ. զասացելոցն:

¹²² Բ. հեպարքոսն:

¹²³ Ա. չիք ասէ:

¹²⁴ Ա. չիք սիրեալ:

յաւարտ խաղաղիմք, եւ եթէ ի դերեւս լիցի քեզ ելանել¹²⁵ դու ընդ նորա մահու գրաւեալ քերքես ի կենցաղոյս»:

«Բարևոք բարբառիք, - ասէ, - համբակն, ո՛վ կարող կալուէք կենաց կեղեքելոց ի կոկորդոս ձեր: Բայց տուք ինձ նախ հրաման՝ երթեալ զինու¹²⁶ վառիլ եւ ապա յայս հանդէս մրցանակի շահատակել»: Որում պատասխանեալ եպարքոսին՝ ասէ. «Է՛, ստակարկատ կեղծաբան, զի թանգ ուզես. յառիւծն պատառեալ չէր ոչ սրոյ վէրք. ոչ ատրճանակի հարանք, եւ ոչ այլ զինուց զինուորմանց¹²⁷ վիրաւորման ինչ տեղի, եւ զմէ՞ բաղայս բաղբաղես զինուորիլ զինու»::

Ասէ մանուկն՝ «Եւ չէ ինչ արդ պիտոյ զբազում բանիւք գալ, եւ ի ճշմարտութեան¹²⁸ խօսելեաց վրիպեալ գտանիլ: Ասացից զանսուտն, տէր փոխարքայ, զի՞ եթէ ո՛չ նախ զարդու զինուք յօրինեցայց՝ չէ ինձ մարթ ի ձեր համարձակիլ հրամանս»:

Յայնժամ որպէս եւ կամերն՝ յատենէ անտի ի տուն արձակեալ կալին¹²⁹՝ կացին, որք ընդ նմայն¹³⁰՝ զօրականք¹³¹ առ դուրս, եւ ինք մտեալ ի ներքս անդր՝ խնդրեաց խառնելեօք ի մօրէն ի գինւոյ անտի, զոր ըմպեալ եւ ելեալ արտաքս՝ զնաց ընդ նոսա եւ հասեալ յաշխարհաժողով¹³² դուռնն¹³³՝ խրախուսիլ խիզախէր:

«Ածէք ինձ այսր¹³⁴, - ասէր, - զգազանն կատաղութեամբ զինեալ, եւ ես անձամբ անձին ընկճեալ, նուաճեալ պարտեցից զնա»:

Իբրեւ շօշափմամբ հասին ի վերայ՝ զի ո՛չ բարձեալ տանէր զիւրեւ ի զինուց ինչ. ի սքանչանս ըմբռնեցան, բայց ելից իրացն¹³⁵ ուշ եդեալ ակն ունէին: Ապա ի հրամանէ թագաւորին ածաւ մատուցաւ ի մէջ անարգելն առիւծ՝ արձակ ունելով յամեն ուստեքէ զկապանացն արգելս եւ յարձակեալ ի վերայ՝ կամէր գազանային ժանեօքն լափլէզ մաքրել զմանուկն: Տի՛ նա՝ եւ սա ըստ առաջինն այն նուագի՝ գօտեպինդ քաջասրտեալ. նաեւ զայս զմիւսոյն լծորդ ըմբշամարտութեամբ յաղթեաց եւ կամէր սմա որպէս

¹²⁵ ա. չիք բաղդի...քեզ ելանել:

¹²⁶ ք. զգինու:

¹²⁷ ա. զինուորմանց:

¹²⁸ ք. ճշմարտութենէ:

¹²⁹ ա. կացին փիս կային:

¹³⁰ ք. նմա:

¹³¹ ք. զօրականք:

¹³² ք. աշխարհաժողով:

¹³³ ք. զդուռն:

¹³⁴ ք. չիք այսր:

¹³⁵ ք. ելից և իրացն:

եւ նմա զնոյն մրրկախառն բաժակ մահու տալ ըմպել. եթէ չիցէր արգելեալ ի հիպարքոսէն¹³⁶ յայս ձայն թէ՛ «Թո՛յլ տուր, առիւծուդ արի՛ առիւծդ անարի, զի աւանիկ զքո գերօրինակ քաջութեանդ առաք զչափ, բայց դու եկ անսա, ասա¹³⁷ ինձ, թէ ո՞ր եւ որո՞վ անջան¹³⁸ եւ անվկանդ զօրութեամբ զօրացար ի զօրեղ առիւծուս վերայ»:

Ասէ պատանին այդորիկ մեկնե[ա]լ՝ «Առ յինէն յանհնարիցն ահա¹³⁹ թէ եւ յօշօշ զանդամոց իմ յօդս հրամայիցես առնել»:

Հիպարքոսն երկիւղիկս արկեալ՝ համբալին ասէ. «Իսկ եթէ ոչ ասասցես. ապրեալդ յերկուց մահուց երրորդիւս անգերծ¹⁴⁰ վտանգեսցիս մահուամբ. եւ զառիւծուն հատուցեալդ չափ պատարուն կատարումն¹⁴¹ ի գում¹⁴² գոգի գոգեա՛ զեղուն»։ Պատանին ասէ. «Եւ չէ ինչ այդ ապաքէն ցապաք. արդ այսօր ի քո ձեռանէ զկենացս կատարած կայ ինձ համբուրել, թէ յայտնեցից եւ թէ թաքուցից¹⁴³։ Բայց լաւ¹⁴⁴ լիցի ինձ ապաքէն՝ ծածկելով զխորհրդապահի անուն ժառանգել, քան փեռեկտելով ինձէն ինձ ի վիհ¹⁴⁵ անհամար¹⁴⁶ կորստեան խեղդիւք չըթանցս խարդաւանիլ»¹⁴⁷:

Իբրեւ սոյնասարաս կորովի խօսիւք լինէր պետն պատասխանեալ։ «Երդնում, - ասէ, - յարեւն արքայի, զի չիցէ ինչ քեզ վտանգ իսկ կենաց հոլոնել¹⁴⁸ զսքանչելի ուժգնութեանդ զխորհուրդ»:

Յայս ձայնէ բարբառոյ զօրացեալ զօրեղ զօրութեամբ¹⁴⁹ զածածին¹⁵⁰ յուշ ածեալ սկսաւ զարգել հրամանին, որ նախքան զվեշտասան ամի եւ զմօրն գաղտնել զկարասն գինւոյ¹⁵¹, եւ նորին զնովաւ սնունդ, եւ¹⁵² զառ ի նմա-

¹³⁶ ք. յիպարքոսէն:

¹³⁷ ք. անսա լ'ասա:

¹³⁸ ք. անվան:

¹³⁹ ք. է ահա:

¹⁴⁰ ք. անգեղծ:

¹⁴¹ ք. պատարուն և կատարուն:

¹⁴² ք. քում:

¹⁴³ ք. թագուցից:

¹⁴⁴ ք. չիք լաւ:

¹⁴⁵ ք. վեհ:

¹⁴⁶ ք. արիամարի:

¹⁴⁷ ք. խարդաւանել:

¹⁴⁸ ք. հոլանել:

¹⁴⁹ ք. զօրութեան:

¹⁵⁰ ք. զածածնին:

¹⁵¹ ք. գինոյ:

¹⁵² ք. չիք և:

նէ¹⁵³ յաղթութիւն եւ¹⁵⁴ թէ «այն իսկ էր իմս սպառազինութիւն¹⁵⁵, զոր ոչ յերեւելիս ունել ումեք պիտոյք¹⁵⁶ գոն, բայց եթէ ի ներքուստ անտուսդ¹⁵⁷ զնորայն¹⁵⁸ բոցափայլ զօրութիւնն¹⁵⁹ ցոլացուցանել»: Իբրեւ սոյն օրինակ բանք ի պատում պատանեկին¹⁶⁰ լինէին լսելի, ի հրուստ ժամս, որք անդն էին՝ բազմականք եւ ոտնկայք կառեալ¹⁶¹ կապեալ ի հիացումն կարգեալ՝ ոչ ունէին այլ ասել կամ լսել ինչ, եթէ ոչ զիրերաց զհետ հծծել յաղթանակ¹⁶² քաջալանջ մանկանս վասն, եւ զնորուն դրուագ դրուատի համարձակաճայն համայնից հնչել: Բայց զի մի՛ յանբաւ յորդորութիւն¹⁶³ անդ գեղցի բանս համառօտ հատանել հաւանիմ:

Ուստի թողեալ զբազումս խորախոհ մտաց իմաստասիրել՝ անցեալ կացից ես անընդհատ պարապմամբ առ պսակ կատարման առաջադիր գործոյս:

Արդի գործոյս կէտ կատարածի վեր ընծայեցին զյաղթութիւնս¹⁶⁴ գործակ յաստիճան¹⁶⁵ աւագ. գիւղից եւ գերդաստանաց կարգեալ զնա տէր, եւ ի թիւս ազատաց զնա դասեալ:

Եւ այսպէս բարեմոյն քաջողջութեամբ եւ նովին¹⁶⁶ նսեհ բարօրութեամբ կատարեալ ըզկեանս՝ ընկալաւ զվախճան բարի եւ բարւոք ծերութեան, թողեալ ժառանգս եւ ընչաւէտ ժառանգութիւնս զկնի իւր՝ ի յիշատակ յաւիտենական յապա ժամանակի արիական հոյակապ նահատակութեանն:

Ըստ որոյ օրինակի եւ մեզ շնորհեսցէ Պարգեւատուն ամենայնի գինեաւ արեան իւրոյ զարգանալ, զօրանալ՝ զինիլ¹⁶⁷ եւ ի հանդէս ճակատու աներեւան¹⁶⁸ ոսոխին մերոյ յաղթօղ գտանիլ, որ իբրեւ զառիւծ գոչէ ընդ պարագլխոյն առաքելոց վկայելոյ, շրջի եւ խնդրէ թէ զո՛ր կլանիցէ:

¹⁵³ ք. նմանէն:

¹⁵⁴ ք. չիք և:

¹⁵⁵ ք. սպառազինութիւն:

¹⁵⁶ ք. պիտոյ:

¹⁵⁷ ա. անտուստ:

¹⁵⁸ ք. զնորուն:

¹⁵⁹ ք. զօրութիւն:

¹⁶⁰ ք. պատահէին փխ պատանեկին:

¹⁶¹ ք. կասեալ:

¹⁶² ք. յաղթական:

¹⁶³ ք. յորդորութիւն:

¹⁶⁴ ք. զյաղթութեանս:

¹⁶⁵ ա. յաշտիճան:

¹⁶⁶ ա. չիք նովին:

¹⁶⁷ ա. շինիլ:

¹⁶⁸ ք. աներկեան:

Քանզի եւ մեզ մարտ առաջի կայ, բայց ոչ ըստ մարմնոյ եւ ըստ արեան, այլ ըստ խաւարային օդական այսոց փաղանգս, յորոց լիցի մեզ զերծանիլ չնորհօք Ամենափրկչին Յիսուսի. եւ զօրութեամբ արեան նորա խորտակել զգօրութիւն նոցա եւ զհնարս: Ամէն:

ՎԵՐՁԱԲԱՆՔ

Բայց դու եկ տե՛ս ինձ, թէ զի՞նչ ի միում եւ զի՞նչ ի միւսում գործեաց զինին զի յառաջինն յայն նուազ յայնքան անարգ նուաստութիւն¹⁶⁹ զիջոյց զըմպուս¹⁷⁰ իւր՝ մինչեւ զլինել բաւական քաջագիր նօտարաց կարգէ՛¹⁷¹ յանբաւ տարածութեան ընդ արձակատարր քարտիզի զնոցուն պարսաւս, թէեւ յերկուս տարժանէին¹⁷², իսկ յերկրորդում յայս անգամ յայնքան ծայրագոր¹⁷³ երջանկութիւն¹⁷⁴ զզինեալն նովիմբ արար ժաման, մինչ զրէ թէ յանարգ կայից ի բարձրագոյն¹⁷⁵ բարձրացոյց փառս Հանդերձ կրկնանուագ փրկութեամբ ի մահուն դրանց:

Թողում որ ինչ¹⁷⁶ յաւուրց անտի եւ այսր ի յուշոյ յիշատակաց եւ յանվեհեր գրչաց¹⁷⁷ կշռեալն. եպերանաց պարսաւ մոլելոցն¹⁷⁸ ի նոյն, եւ բարեբան ներբող Համեստացելոցն նովին:

Ընդ որում եւ ինձ եհաս՝ արտավարան¹⁷⁹ հիքացելոյս¹⁸⁰ եւ վերջացելոյս. արդարեւ յիմաստնոցն դամարձակէ. եւ յիմաստիցն վիճակէ սակաւութ զսովաւ աշխատասիրել:

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՍ ԶՈՒՍՈՒԹԵԱՆ

Նախ քան զայս ճոխ ճառեցի զախտին շուայտութեան Կարթագինեայ տիրանել. եւ զգառածանելն չարաչար զքաղաքն ողջոյն: Զառա-

¹⁶⁹ ա. նուտսի:

¹⁷⁰ բ. զումպուս:

¹⁷¹ բ. կարգել:

¹⁷² բ. տաժանին:

¹⁷³ բ. ծայրաւոր:

¹⁷⁴ բ. երջանկութեն:

¹⁷⁵ բ. բարձրագոյն:

¹⁷⁶ բ. յինչ:

¹⁷⁷ բ. կշռաց փիւ գրչաց:

¹⁷⁸ բ. մոլելոց:

¹⁷⁹ բ. արտավարն:

¹⁸⁰ բ. հեգացելոյս:

քումն հոյակապ իշխանի միոյ ի գործ ինչ պիտեւան, եւ յուղեղ¹⁸¹ զզեղ-
խիլ գինեաւ եւ զնիրհել: Զառ վայրն անգեղ պատահեալ զերկուս զաչսն
զխճել աչացունին¹⁸² յոգիք¹⁸³ եւ նորին յանիմայս լեալ. ի թափիլ գինւոյն
զանդրէն դարձն մեծաւ կոծիւ: Թագաւորին¹⁸⁴ ի¹⁸⁵ վարանս յայսպիսահասն
ըմբռնիլ վտանգից եւ զխորհրդականացն խորհրդով սաստիկս¹⁸⁶ իմն բա-
գարկումն գինւոյս¹⁸⁷ արձակելով զառիւծս երկուս առ երեկոյ ի քաղաքին
փողոցս, յարգելս երթեակեկութեան, յորում ժամանակի եւ կնոջ մի այրւոյ¹⁸⁸
երկեմեան ունողի մանկան ի դէպ գայ գաղտնել զկարաս մի գինւոյ, որով
եւ զարգացուցեալ զմանուկն մինչեւ զպատանեկութեանն ողջունել նմա
գտիս¹⁸⁹, որ եւ յաւուրց միումն ապաժամ ի գործոյ ի կեալ¹⁹⁰ չժամանէ բե-
րել յաղբերէ անտի ջուր: Իսկ ծարաւն ի ժամին գինեաւ զիջուցեալ, ապա
ի տապ պապակեալ եւ յաղբերակն չոգեալ ի սափորն¹⁹¹ ընուլ, ի դարձին
առիւծ նմա պատահի, զոր մենամարտեալ¹⁹² ընկճեալ ցելոյր զժանիսն¹⁹³ ի
լըջանալ այերաց խնդիր այնմ եղեալ ի կամաց կանգնի կացին յատեան, եւ
ի հաւատալի¹⁹⁴ բանիցն լինել¹⁹⁵ ի փորձառութեան միսեալ հանդէս՝ զկեն-
դանին ածին¹⁹⁶ ի մէջ զառիւծ: Համբակին հրաման առեալ սպառազինիլ, եւ
երթեալ ի տուն հին գինեաւ¹⁹⁷ զանխուլն գինեալ՝ զառիւծուն¹⁹⁸ ի մրցման¹⁹⁹
գտանի յաղթական, իսկ ի զորպէսն հարցանել լռէ զստուգութիւնն²⁰⁰, եւ
յապահոմն ի յեպարքոսէն²⁰¹ լինիլ. ճառէ ի զառմու զամենայն: Յորմէ հա-
սանէ նմա յաւագաց վերտոնել դասս եւ բարեկրութեանց տիրանել մեծաց:

¹⁸¹ ք. յուղեղ:

¹⁸² ք. զաչացունին:

¹⁸³ ք. յոգի:

¹⁸⁴ ք. Թագաւորի:

¹⁸⁵ ք. զի փխ ի:

¹⁸⁶ ք. սաստիկ:

¹⁸⁷ ք. գինւոյ:

¹⁸⁸ ք. այրոյ:

¹⁸⁹ ք. ի կեալ փխ տիս:

¹⁹⁰ ք. եկեալ փխ ի կեալ:

¹⁹¹ ք. զսափորն, չիք ի:

¹⁹² ք. մենամարտիկ:

¹⁹³ ք. զժանիս:

¹⁹⁴ ք. հաւատալի:

¹⁹⁵ ք. լինիլ:

¹⁹⁶ ա. ածեն:

¹⁹⁷ ք. գինեաւ:

¹⁹⁸ ք. առիւծուն:

¹⁹⁹ ք. մրցման:

²⁰⁰ ք. զստուգութենէն:

²⁰¹ ք. յիպարքոսէն:

Ի ՆՈՅՆ ԿԱՐԳ ԲԱՆՔ ԶԱՓԱԿԱՆՔ

Գինին ըախատու²⁰² մտաց եւ սրտից,
 Սակաւ ըմպողաց մայր է շատ օգտից,
 Խ[ը]մեկ[ը]ն ի նոյն գունակ շուայտից
 Յոգիւ ի մարմին գործէ գանալից:
 Տես դու զբազումս²⁰³, որք յայս մոլեցան,
 Ի բարձր կայից որպէս հոսեցան,
 Բայց որք սակաւու սորին շատացան՝
 Մեծաց գովեստից յար արժանացան:
 Զի քաջ խորհրդով շատ գործ վճարին,
 Ոյր չէ²⁰⁴ բաւական աշխարհ վճարին:
 Բայց շատն գինւոյ²⁰⁵ տոյժ է հանճարին,
 Զբանին²⁰⁶ առնէ յանգէտ պաճարին:
 Եսփոփ տխրանաց է սա²⁰⁷ պիտեւան,
 Պիտանեաւ լինին բազումք անպիտան.
 Վշտացն փարատ՝ ոմանց է սատան,
 Որք ի նոյն յար[ա]կ դանդաշեալ մնան²⁰⁸.
 Բռնապօսեսցուք ի գինւոյն²⁰⁹ պատճառ.
 Զանցս²¹⁰ վաղեմիս կարգել ի յայս ճառ:
 Ուստի սա²¹¹ լիցի յարացոյց պայծառ,
 Եւ մեք գործեսցուք այս վիպի վճար:

²⁰² ք. ուրախատու:

²⁰³ ք. զբազում:

²⁰⁴ ա. զի փխ չէ:

²⁰⁵ ք. գինոյ:

²⁰⁶ ք. Զբանեսան:

²⁰⁷ ա. էսո փխ է սա:

²⁰⁸ ք. գտան փխ մնան:

²⁰⁹ 208 ք. գինոյ:

²¹⁰ 209 ա. զանձս:

²¹¹ 210 ա. ու փխ սա:

РЕЗЮМЕ

Публикуемое произведение взято из рукописей NN 8420 (XVIII., Константинополь?) и 10589 (1817, Константинополь) Матенадарана им. Месропа Маштоца. Время и обстоятельства создания повести по имеющимся данным конкретизировать не возможно. Можно лишь исходя из особенностей языка и стиля предполагать, что оно написано в X-XI. вв. приблизительно.

Повесть дидактического характера написана в форме письма, которая имеет своего “адресата” – молодое поколение. Две сюжетные линии выявляют две особенности вина – вредное и полезное. По сему первая часть произведения является порицанием а вторая – хвалой.

SUMMARY

The published novel is taken from manuscripts NN 8420 (Constantinople?) and 10589 (1817, Constantinople) from the Matenadaran of Mesrop Mashtoc. It is impossible for us to know the time and consequences of the creation of the novel due to the lack of materials we have. The only way to guess that it was written in X-XI centuries is by the style of the language used in the text.

The didactic novel is written in a form of a letter which is addressed to the young generation. The plot to this story has two directions, one shines light on the positive effects of wine while the other shows the negative side effects.

